



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

Երևան, Բաղրամյան 19, 333 սենյակ, հեռախոս (10) 51-33-58

«20-ի դեկտեմբերի 2012թ.

N 030-Ե-38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգի ՀՀ օրենքի 47-րդ և 50-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին և «Տեղական հանրաքվեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծին կից ներկայացվում են օրենքների նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը, օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության և գործող օրենքների փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում եմ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Է. ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆԷ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թ. նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի 21-րդ հոդվածում՝

1) երկրորդ պարբերությունից հետո լրացնել շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երրորդ և չորրորդ պարբերություններով.

«Սույն հոդվածի իմաստով բացառիկ դեպք է համարվում հուշարձանի ոչնչացման սպառնալիքը:

Հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելուց կամ տեղափոխելուց առաջ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմակերպում է տեղական հանրաքվե: Հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանների փոքր բեկորների տեղափոխումից կամ փոփոխումից առաջ Հանրապետության կառավարությունը կազմակերպում է հանրային լսումներ՝ ներգրավելով անկախ մասնագետների, շահագրգիռ անձանց և հուշարձանի գտնվելու վայրի համայնքի բնակիչներին:

2) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հուշարձանների տեղափոխման և փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության և հանրաքվեի արդյունքների հիման վրա:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-304 օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր (թ) կետով.

«թ) Հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելու կամ տեղափոխելու հարցերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Համայնքները միացնելու կամ առանձնացնելու հարցով Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց առաջ, ինչպես նաև հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելու կամ տեղափոխելու հարցերով համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ

**ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆԷ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԵՎ

**«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

1.1 Իրավական ակտի անհրաժեշտությունը. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման նպատակն է կարգավորել ոլորտում առկա բացը, այն է՝ հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման բացառիկ դեպքի, ինչպես նաև այդ հուշարձանները տեղափոխելու կամ փոփոխելու դեպքում հուշարձանի՝ իր սկզբնական գտնվելու վայրի համայնքի բնակչության կամքը հաշվի առնելու՝ լիազոր մարմնի պարտականության սահմանման բացակայությունը:

1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2012 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման մասին թիվ 1169-Ա որոշումը: Ըստ այդ որոշման՝ հանրապետության տարբեր մարզերից Երևան պետք է տեղափոխվեն պատմության և մշակույթի 63 անշարժ հուշարձաններ: Թվով 51 հուշարձաններ արդեն իսկ տեղափոխվել են Երևան:

Կառավարության նշված որոշումը գիտական շրջանակներում, մասնագետների և քաղաքացիների շրջանում առաջացրել է լուրջ դժգոհություն գրեթե բոլոր այն տեղերում, որտեղից պետք է տեղափոխվեին կամ արդեն տեղափոխվել են պատմամշակութային հուշարձանները:

Մշակույթի ոլորտի պատասխանատուները պնդում են, որ նախ, դրանք հուշարձաններ չեն, այլ «բեկորներ և երկրորդ, որ դրանք տեղափոխվել են վերանորոգման և վերականգնման համար: Օրեր առաջ կազմակերպվել էր մամուլի ասուլիս, որի ժամանակ տեղեկացանք, որ խոսքը բեկորների մասին չի գնում, այլ ամբողջական հուշարձանների, որանց վրա որևէ նորոգման կարիք իրականում չկա:

Փաստ է նաև այն, որ պատմամշակութային հուշարձանն էապես կորցնում է իր գիտական, մշակութային և հոգևոր նշանակությունը, երբ իր գտնվելու վայրից տեղափոխվում է այլ վայր:

1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Կառավարության վերոնշյալ որոշումը ոչ մի կերպ չի նպաստում տարածքային համաչափ զարգացմանը, Երևան քաղաքի բեռնաթափմանը, ինչպես նաև Երևանի համեմատ մարզերի տնտեսական ակտիվության առաջանցիկ աճի ապահովմանը, քանի որ կառավարության նախաձեռնությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման դեպքում կնվազի տուրիստների հոսքը դեպի մարզեր, որոնք այցելում էին պատմական վայրեր՝ նպատակ ունենալով տեսնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները իրենց գտնվելու պատմական վայրերում: Մյուս կողմից, մարդիկ, ովքեր ավանդույթի ուժով ուխտի են գնացել մարզերում գտնվող պատմական վայրեր, այլևս չեն կարող գնալ այնտեղ, որտեղից բացակայում են ուխտատեղի հիմնական սրբությունները:

Սույն նախագծով սահմանվում է հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման բացառիկ դեպքերի հասկացությունը և նախատեսվում է լիազոր մարմնի՝ հուշարձանները տեղափոխելու կամ դրանք փոփոխելու դեպքում տեղական հանրաքվե անցկացնելու, իսկ այդ հուշարձանների համեմատաբար փոքր բեկորների տեղափոխման կամ փոփոխման դեպքում՝ հանրային լսումներ կազմակերպելու պարտականությունը:

2. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան են հանդիսանում հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման հետ կապված իրավահարաբերությունները:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում գործելու է լիազոր մարմնի կողմից հանրապետական և տեղական նշանակության հուշարձանները տեղափոխելու կամ դրանք փոփոխելու ժամանակ հասարակական կարծիքը հաշվի առնելու մեխանիզմ, ինչի արդյունքում կբացառվեն հետագա տարընթերցումները, անհամաձայնությունները և բախումները:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԵՎ**

**«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու կատարելու մասին և «Տեղական հանրաքվեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

**ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀՀ ՕՐԵՆՔԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հոդված 21. Հուշարձանների քանդումն արգելումը: Հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը

Հուշարձանների քանդումն արգելվում է:

Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների թույլտվությամբ:

Հուշարձանների տեղափոխման և փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա:

Նախքան հուշարձանը տեղափոխելը կամ փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանք կատարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման և լուսանկարման աշխատանքները:

Սույն հոդվածով նախատեսված աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են հուշարձանի տեղափոխման կամ փոփոխման թույլտվություն ստացողի հաշվին:

**ՀՀ ՕՐԵՆՔԸ
ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ**

Հոդված 5. Տեղական հանրաքվեի դրվող հարցերը

1. Տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված հարցերը:

2. Տեղական հանրաքվեի **չեն** կարող դրվել՝

ա) Սահմանադրությամբ կամ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը.

բ) մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերը.

գ) պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորություններին առնչվող հարցերը.

դ) համայնքի ղեկավարի աշխատակազմի ձևավորմանը վերաբերող հարցերը.

ե) համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաև համայնքի ֆինանսական պարտավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերը.

զ) համայնքի սեփականության օտարման մասին հարցերը.

է) բնակչության առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ և շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերը.

ը) պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնող հարցերը:

3. Տեղական հանրաքվեի դրվող հարցը պետք է ձևակերպվի այնպես, որ հնարավոր լինի դրան տալ միանշանակ պատասխան:

(5-րդ հոդվածը լրաց. 28.11.06 ՀՕ-244-Ն)

Հոդված 7. Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը

1. Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ինչպես նաև տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը:

Համայնքները միացնելու կամ առանձնացնելու հարցով Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց առաջ համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ:

2. Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող առնվազն 5 քաղաքացի կարող են ձևավորել տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնող խումբ (այսուհետ՝ նախաձեռնող խումբ):

3. Նախաձեռնող խումբը դիմում է տվյալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպող ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով)՝ գրանցվելու խնդրանքով, որի համար իր բոլոր անդամների ստորագրած դիմումին կից ներկայացնում է՝

ա) տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող տեղական ինքնակառավարման մարմնի որոշման նախագիծը.

բ) իր անդամների և լիազոր ներկայացուցիչների ազգանունը, անունը, ծննդյան թիվը, բնակության և աշխատանքի վայրը (պաշտոնը), կուսակցական պատկանելությունը, անձնագրային տվյալները.

գ) տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալու մասին իր ժողովի որոշման արձանագրությունը:

4. Նախաձեռնող խմբի դիմումն ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովն ստուգում է այդ դիմումի ու դրան կից ներկայացված փաստաթղթերի օրինականությունը և որոշում է ընդունում նախաձեռնող խումբը գրանցելու կամ նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին:

5. Եթե տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող որոշման նախագիծը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին, ապա նախաձեռնող խմբի առաջարկությամբ կամ համաձայնությամբ հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովը, մինչև նախաձեռնող խմբին գրանցելու վերաբերյալ որոշում ընդունելը, կարող է փոփոխել այդ նախագծի ձևակերպումը՝ պահպանելով դրա հիմնական բովանդակությունը:

6. Եթե հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովը որոշում է ընդունում նախաձեռնող խմբին գրանցելու մասին, ապա նա վերջինիս լիազոր ներկայացուցչին հանձնում է տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող որոշման նախագծի գրանցման վկայականը և հանրաքվեի անցկացման նախաձեռնությունը պաշտպանելու համար ստորագրահավաքի պաշտոնաթերթիկները (այսուհետ՝ պաշտոնաթերթիկներ)՝ այդ մասին տեղեկացնելով համապատասխան մարզպետին, համայնքի ավագանուն, ղեկավարին և զանգվածային լրատվության միջոցներին:

7. Եթե հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովը որոշում է ընդունում նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին, ապա նա այդ որոշման մեջ նշում է մերժման հիմքերը և երկու աշխատանքային օրվա ընթացքում դա պաշտոնապես հանձնում է նախաձեռնող խմբին:

8. Նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու համար հիմք կարող է լինել միայն նախաձեռնող խմբի կողմից սույն օրենքի պահանջների խախտումը: Նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

(7-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. 28.11.06 ՀՕ-244-Ն, փոփ. 26.12.08 ՀՕ-25-Ն)